ԶԵԿՈՒՅՑ

2019 թ. վարչական և ֆոնդային բյուջեներում փոփոխություններ կատարելու մասին

2019 թվականի վարչական բյուջեում անհրաժեշտ է.

-Նախատեսված համակարգչային պահեստամասերի ձեռք բերման համար նախատեսված ծախսերը ավելացնել 100 000 դրամով համակարգիչների հետ կապված լրացուցիչ խնդիրներ առաջանալու հետևանքով:

-Սոցիալական հատուկ արտոնությունների համար նախատեսված միջոցները ավելացնել 9850 000 դրամով, այդ թվում՝ 7000 000 դրամ դրամական աջակցության և սոցիալապես անապահով ընտանիքներին ուսման վարձերի համար, 2850 000 բարեգործական ճաշարաններին աջակցելու համար:

- Հաշվի առնելով Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի գրությունը Ս.Թադեոս եկեղեցուն աջակցելու համար հատկացնել նվիրատվություն 2000 000 դրամի չափով:

- Բազմաբնակարան շենքերի բակերի ապօրինի շինությունների ապամոնտաժման համար անհրաժեշտ է 200 000դրամ:

- Քաղաքապետարանի դիմացի այգու նստարանների ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ է 600 000 դրամ, ցածրարժեք խաղային սարքավորումներ ձեռք բերելու համար 50 000 դրամ:

2019 թ. ֆոնդային բյուջեում անհրաժեշտ է նախատեսել.

- Քաղաքապետարանի դիմացի այգու խաղային սարքերի ձեռք բերման համար՝ 550 000 դրամ:

-1-10-րդ փողոցների խճապատման և հարթեցման համար՝ 975 000 դրամ:

Ֆոնդային բյուջեում անհրաժեշտ փոփոխությունները կատարելու համար առաջարկվում է ՄՊՍԿ-ի և գրադարանի մասնաշենքերի ջեռուցման համակարգի կառուցման համար նախատեսված միջոցներից պակասեցնել 1525 000 դրամ հետագայում տարեսկզբի մնացորդի գումարներից հատկացնելու պայմանով:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան